ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2025թ. թիվ 202-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԹԻՎ 464-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում տեղի ունեցած կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի հուլիսի 25-ի «Աղետի գոտում փոխհատուցման նպատակայնության մշտադիտարկում իրականացնելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 464-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. ապրիլի 23-ի
թիվ 202-Ա որոշման

«Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. հուլիսի 25-ի
թիվ 464-Ա որոշման

Կ Ա Զ Մ

Աղետի գոտում փոխհատուցման նպատակայնության
մշտադիտարկում իրականացնող հանձնաժողովի

Հ.Ավետիսյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Վ.Եղիազարյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ.

Մ.Դալլաքյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Մ.Խեչումյան - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Ռ.Մարգարյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Ա.Դանիելյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալի օգնական

Ռ.Սահակյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալի օգնական

Հ.Ձավարյան - Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հ.Գալստյան - Ալավերդու համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ

Մ.Գրիգորյան - Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ

Կ.Մելքոնյան - Փամբակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Ա.Պողոսյան - Տաշիր համայնքի ղեկավարի տեղակալ

Ս.Շահբազյան - Տաշիրի համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ

Ռ.Օհանյան - Գյուլագարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Ս.Սուքիասյան - Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

23/04/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. ապրիլի 23-ի
թիվ 202-Ա որոշման

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Աղետի գոտում փոխհատուցման նպատակայնության մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծված մշտադիտարկման հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/ իր աշխատանքներն իրականացնում է համաձայն հետևյալ աշխատակարգի.

1. Փոխհատուցման ընդհանուր արժեքի յուրաքանչյուր փուլի 25%-ը ստանալուց հետո շահառուն թույլատրելի ուղղությամբ առնվազն 60%-ի չափով պետք է իրականացնի շինանյութի կամ առաջնային անհրաժեշտության գույքի ձեռքբերում անկանխիկ եղանակով: Այդ մասին շահառուն տեղեկացնում է համայնքապետարանի կամ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Հանձնաժողովի անդամ համարվող անձին:
2. Հանձնաժողովի աշխատանքային խումբը տնային այցելությամբ իրականացնում է բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան բնակելի տարածքի վերանորոգման վնասի և կենցաղային առաջնային գույքի փոխհատուցման նպատակայնության մշտադիտարկում, որն առնվազն պետք է ներառի բնակարանի (բնակելի տան) վերանորոգման ընթացքի մասին տեղեկությունների հավաքագրումը և արձանագրումը՝ կցելով արված լուսանկարները կամ տեսագրություն:
3. Համապատասխան հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը կազմում է հաջորդ փուլի փոխհատուցման իրավունք ունեցող շահառուների ցանկը:
4. Հանձնաժողովն արձանագրում է աշխատանքային խմբի կատարած աշխատանքները և հաստատում է ցանկը, որն ստորագրում են Հանձնաժողովի համապատասխան անդամները:
5. Հանձնաժողովը որոշում է կայացնում ցանկում նշված շահառուների փոխհատուցման գումարները վճարման ներկայացնելու մասին:
6. Հանձնաժողովի նախագահը փոխհատուցման ենթակա շահառուների ցանկը, Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը զեկուցագրով ներկայացնում է մարզպետի հաստատմանը:
7. Մարզպետի հանձնարարությամբ մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունը փոխհատուցման ենթակա շահառուների ցանկը գրությամբ ներկայացնում է փոխհատուցումը սպասարկող բանկին:
8. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստից հետո կատարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն մարզպետին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

23/04/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ